ԱԶԳԱՅԻՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

# ԱՊԱԳԱՅ

ԽԳ. ՏԱՐԻ ԹԻՒ 2413 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 4 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023
• VOL. XLIII, NO 2413 • 4 DECEMBRE 2023 • MONDAY, 4 DECEMBER 2023




## ԵՒՐՈԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ԴԷՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿՈՉ Կ'ԸՆԷ



Եւրոխորհրդարանի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովը ընդունած է Անվտանգութեան եւ պաշտպանութեան միասնական քաղաքականութեան իրականացման եւ ընդհանուր արտաքին ու անվտանգութեան քաղաքականութեան իրականացման տարեկան զեկոյցները, որոնք կը դատապարտեն Ատրպէյճանի յարձակողական քաղաքականութիւնը, նախապէս ծրագրուած ռազմական յարձակումը Լեռնային Ղարաբաղի դէմ:

«Անվտանգութեան եւ պաշտպանութեան միասնական քաղաքականութեան իրականացման տարեկան զեկոյցին մէջ նշուած է, որ Ատրպէյճանի կողմէ իրականացուած յարձակումը չի կրնար անհետեւանք մնալ, եւ կոչ կ'ընէ ԵՄ-ին պատժամիջոցներ կիրառելու ատրպէյճանական իշխանութիւններուն դէմ, որոնք պատասխանատու են հրադադարի բազմաթիւ խախտումներուն համար»,- նշուած է հրապարակման մէջ:

Շար. - էջ 9

## ՀՀ ԱԳՆ. «ԱՏՐՊԷՅՃԱՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԱՐԳԻԼԵԼ ԱՐՑԱԽ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԻՒՆԵՍՔՕ-Ի ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆԸ»



«Սփութնիք Արմէնիա»-ի հարցումին պատասխանելով՝ Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութիւնը յայտնեց, որ Ատրպէյճան կը շարունակէ արգիլել ԻՒՆԵՍՔՕ-ի առաքելութիւնը Լեռնային Ղարաբաղ ուղարկելու նախաձեռնութիւնը:

Նախարարութիւնը դիտել տըւաւ, որ 2020-ին, Արցախի վրայ Ատրպէյճանի լայնածաւալ յարձակումէն ի վեր, Երեւան միջազգային մասնագիտացած կազմակերպութիւններուն, որոնց կարգին՝ ԵՈՒՆԵՍՔՕ-ի մօտ, մընայուն կերպով կը բարձրացնէ Արցախի մէջ հայկական մշակութային եւ կրօնական ժառանգութեան պաշտպանութեան հարցը:

Նոյեմբեր 2020-էն ի վեր, Հայաստան սատարած է ԻՒՆԵՍՔՕ-ի ընդհանուր տնօրէնին՝ Արցախ փորձագիտական խումբ ուղարկելու նախաձեռնութեան եւ ներգրաւուած է կարելի եղածին չափ սեղմ ժամկէտներու մէջ առաքելութեան կազմակերպման գործընթացին մէջ:

«Սակայն Ատրպէյճան շարունակաբար կ'արգիլէ ԻՒՆԵՍՔՕ-ի առաքելութիւն ԼՂ ուղարկելու նախաձեռնութիւնը: Ատըրպէյճանի ապակառուցողական կեցուածքը ԻՒՆԵՍՔՕ-ի փորձագիտական առաքելութեան հարցով կը հակասէ մշակութային ժառանգութեան պաշտպանութեան ոլորտին մէջ գործող բոլոր միջազգային համաձայնագրերու, այդ կարգին՝ Ջինեալ բախումներու պարագային մշակութային արժէքներու պաշտպանութեան մասին 1954 թուականի համաձայնագրի դրոյթներուն», կը յայտնէ Արտաքին Գործոց Նախարարութիւնը:

Բացի ատկէ, լուսարձակի տակ կը բերուի այն փաստը, որ Պաքուի դիրքորոշումը կը խախտէ ՄԱԿ-ի Արդարադատութեան Միջազգային դատարանի 7 Դեկտեմբեր 2021-ի որոշումը, որ Ատրպէյճանը կը պարտաւորեցնէ ՝ «ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցներուն՝ կանխելու եւ պատժելու հայկական մշակութային ժառանգութեան վանդալութեան ու պղծման գործողութիւնները, ներառեալ՝ եկեղեցիներու եւ այլ պաշտամունքի վայրերու, յուշարձաններու, տեսարժան վայրերու, գերեզմաններու եւ արուեստի գործերու»:

*Թէքէեան Մշակութային Միութիւն-Մոնթրէալ*

## ՓՈԽԱԴԱՐՁ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԵՒ ԵՐԱԺՇՏԻՔԻ ԵՐԵԿՈՅ



24 Նոյեմբեր 2023-ի երեկոյեան Թէքէեան Մշակութային Միութեան «Յ. եւ Ս. Արզումանեան» Սրահը կը ողողուէր հոծ բազմութեամբ մը. սակայն ոչ ամենօրեայ հասարակութեամբ: Քաղաքական դէմքերը (Liberal Party) ներկայ էին պատուասիրելու խորհրդարանի երեսփոխան մը՝ որ կը վայելէ ամենայն յարգանք, ինքնավստահութիւն, պարկեշտութիւն, գիտակցութիւն, որոնց վրայ կ'աւելնար առողջ մտածելակերպի ու տեսլականի կարողութիւններ:

Ճոխ սեղաններու շուրջ, ջերմ մթնոլորտի մը մէջ Տիկ. Սալբի Հալաճեան-Մարկոսեան բացման խօսքով շնորհաւորեց ազնուափայլ հիւրը, ջատագովելով անոր բոլոր արժանիքներն ու հետեւաբար՝ անոր բոլոր հանրային նուաճումները, որոնցմով օգտուած էր Saint-Laurent-ի շրջանը ընդհանրապէս եւ հայ համայնքը մասնաւորաբար:




**Տիկին Էմանուէլլա Լամպրօբուլօսը:**

Տիկ. Լամպրօբուլօս ծնած է Saint-Laurent. աւարտած է McGill համալսարանը 2013-ին եւ յետոյ տիրացած է Masters of Arts (Educational Leadership) 2020-ին: Մեծ համոզումով փարած է Ազատական (Liberal Party) գաղափարախօսութեան եւ մանաւանդ տարած է մեծ աշխատանք վսեմաշուք Stephan Dion-ի ընտրապայքարին:

Ըլլալով Rosemont-ի բարձրագոյն վարժարանի ուսուցիչ՝ ֆրանսերէն լեզուի եւ պատմութեան, ան, մանաւանդ, ծառայած է տկարութիւն ունեցող յատուկ ուսման կարիքը ունեցող մանուկներուն, իր 6 տարուայ ուսուցչական շրջանին Lauren Hill Academy-ի մէջ:

Քաջատեղեակ ըլլալով անգլերէն, ֆրանսերէն եւ յունարէնի ան ծառայած է Յունական Մշակութային Միութիւններու: Կամաւոր իր աշխատանքը մատուցած է մանուկներու արուեստի ու մարմնամարզական համայնքային շարժումներու:

Ընկ. Արա Պալեան՝ ատենապետ ՌԱԿ Մոնթրէալի Էօժէն Բաբազեան ակումբի, նախ շնորհակալութիւն յայտնեց պրն. Պերճ Մերճանեանի անոր անսակարկ ներակցութեան, սատարելով սոյն երեկոյթի յաջողութեան, յետոյ կուսակցութեան անունով արժանավայել Հիւրին յանձնեց յիշատակագիր մը:

Փոխադարձ էր գնահատանքի ու երախտագիտութեան այս երեւոյթը երբ Տիկին Էմանուէլլա Լամպրօբուլօս հրաւիրուեցաւ իր շնորհակալական խօսքը ուղղելու մասնաւորաբար Թէքէեան Մշակութային Միութեան, որ սոյն երեկոյթով գնահատեց զինք: Ան ծափողջոյններու մէջ Թ.Մ.Մ-ի վարչութեան տուաւ յիշատակի նուէր մը:

Յարմարագոյն առիթն էր երբ. Տիկին Մարի Տէրօս իր կարգին արտայայտեց իր գնահատանքի խօսքերը ուղղուած օրուայ Մեծարեալին ուր շեշտակի օրէն յիշեց անոր մատուցած ծառայութիւնները, նաեւ տիկ. Այտա Գարիպեան (ֆրանսերէնով) յայտնեց իր սրտի խօսքը, արծարծելով անմոռ յիշատակներ ու փորձառութիւններ, որ ունեցած էր օրուան պատուակալ Հիւրին եւ վսեմաշուք Stephan Dion-ի հետ:

Գնահատելի է Մոնթրէալի ՌԱԿ-ի քաղաքական յառաջխաղացումի աշխատանքը, որ կը նպաստէ ոչ թէ միայն իրեն այլեւ Գանատահայ համայնքի յաջող դիմագիծին:

Թղթակից

# ՀԱՐԿԱՒՈՐ Է ԲԱԶՄԱԲԵՒԵՌ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊ ՀԱՆԴԷՍ ԲԵՐԵԼ

**ՍՈՒՐԷՆ Թ. ՍԱՐԳՍԵԱՆ / ՊԳԴ, ՓՐՈՖԵՍՈՐ**

*«Վերին խաւը պաշտում է փողը, միջին խաւը, առաջնորդին, ստորին խաւը Աստծուն»:*
*Ալպերթ Այնշթայն*

1988 թ. սկսուած Ղարաբաղեան շարժումն ընդգրկեց կեանքի բոլոր բնագաւառները, այդ թւում նաեւ պատմագիտութիւնը: Ոլորտի շատ ներկայացուցիչներ, թողնելով իրենց հիմնական թեմաները, սկսեցին փորփրել արխիւներն ու տարաբնոյթ փաստաթղթեր հրապարակել եւ ապացուցել, որ Արցախը պատմական հայկական տարածք է եղել: Տպաւորութիւն էր, թէ ԽՍՀՄ վերնախաւն այդ ամէնից տեղեակ չէր: Սակայն սխալւում էին, քանի որ յատուկ ծառայութիւնների հրահանգով ամէն ինչ ուսումնասիրուած էր եւ նրանք քաջատեղեակ էին իրերի իսկական վիճակի մասին ու ներողամտօրէն ժպտում էին մեր միամտութեան վրայ, քանզի գիտէին, որ թղթերով հողի ու տարածքի տէր չեն դառնում: Պատմութիւնը կրկնւում է: Հիմա էլ ոգեւորուած հրապարակում են 1921 թ. Ատրպէյճանի կողմից Արցախը Հայաստանի անբաժանելի մաս ճանաչելու մասին վաւերագիրը (պատճէն ներկայացուած է վերջում): Իրականում Արցախը Հայաստան է իր ամէն քարով, պատմական յուշարձաններով եւ ամէն ինչով: Հիմա՝ կորցնելուց յետոյ, ճիշդ ժամանակն է, որ բոլոր կասկածները փարատուեն եւ արատաւոր կեցւածք ունեցողներին զրկեն շարունակաբար զիջելու իրենց կործանարար կեցուածքից: Հարկաւոր է նաեւ հասկանալ, որ զանազան վաւերագրերը լոկ թղթի կտորներ են եւ իրականում ուժն է ծնել ու ծնում է իրաւունքը:

Դարեր շարունակ զիջել ու կծկուել ենք, սակայն իրատես չենք դարձել, քանզի զգացմունքայնութիւնը միշտ գերակայ եղաւ սառը դատողութեան ու հաշուենկատութեան նկատմամբ: Այդ պատճառով դիւանագիտութիւն չունեցանք, դարեր շարունակ Վարդան Մամիկոնեանական պաթոսով նետուեցինք անհաւասար մարտերի ու պարտութիւնները յաջորդեցին միմեանց, մեզ թողնելով միայն բարոյական յաղթանակները, ասել է թէ՝ պարտութիւնների խօսքային արդարացումները: Այսօր էլ ոչինչ չի փոխուել, մնացե լ է ճիշդ կողմնորոշուելու հրամայականը, քանզի բան էլ չի մնացել զիջելու: Արդ՝ դարեր շարունակ կողմնորոշման չլուծուած հարցը գերխնդիր է դարձել նաեւ այսօր. դէպի Ռուսաստան, թէ դէպի Արեւմուտք: Աւելին, մեր նորելուկ «ամենագէտ» գործիչների համար դա միջոց է դարձել յարձակման թիրախ դարձնել բոլոր նրանց, ովքեր կը համարձակուեն սեփական տեսակէտ յայտնել: Հիմնախնդրին քաջածանօթ պատմաբան եմ եւ չեմ խուսափի սեփական տեսակէտ յայտնելու, քանզի վստահ եմ, որ ովքեր իրենց փրկութիւնն իրենցից դուրս են փնտռում, կործանւում են: Հարկաւոր է մէկընդմիշտ հասկանալ, որ իւրաքանչիւր էթնոս ունի իր պետական ու ազգային շահերը, ուստի լաւագոյն ելքը դրանց ծիրում տեղաւորուելն է եւ ոչ որեւէ մէկին դէմ գնալը կամ ընդգծուած առաւելութիւն տալը:

Ինձ համար օրինակ այնքան էլ ընդունելի չէ, որ որոշ ղեկավարներ ու քաղաքագէտներ անողոքաբար փորձում են հանրային գիտակցութեանը պարտադրել արեւմըտեան արժէքները: Հնում, երբ Հռոմին չյաջողուեց իրեն ենթարկել հայերին, դիմեց խարդախ միջոցի եւ կաթոլիկութիւն տարածելով սկսեց պառակտել հայ ժողովրդին: Հայաստանում կաթոլիկ քարոզիչներին յաջողուեց համախոհներ հաւաքագրել եւ նրանց կաշառելով դարձնել կաթոլիկութեան քարոզիչներ: Դրանից Պարսկաստանը եւ Թուրքիան Օգտւում էին, քանի որ ջլատւում էին Հայ Առաքելական եկեղեցու շուրջ համախմբուած ժողովրդի ուժերը: Այս օրերին էլ Արեւմուտքը ձգտում է Հայաստանում տարածել արեւմտեան արժէքներ: Այդ նպատակով նրանք գտան քաղաքացիական եւ քաղաքական դաստիարակութիւնից հեռու, անզուսպ ու անվայելուչ շուկայական անողոքութեամբ աչքի ընկնող իրենց ազդեցութեան գործակալներ, որոնք քարոզներով ձգտում են քաղաքացիներին համոզել, թէ Հայաստանի առաջընթացը կարելի է ապահովել բացառապէս Արեւմուտքին համալրուելով ինտէգրուելով: Այդ «առաքեալները» իրենց գործի միակ խոչընդոտը համարում են Ռուսաստանին եւ ձգտում են Հայաստանը հեռացնել նրանից, Հայաստանում վերացնել ընտանեկան աւանդոյթներն ու ազգա-


Երգիծանկար՝ Թոթոյի, յատուկ «Պայքար»ին

յին արժէքները եւ ձեւաւորել արեւմտեան արատաւոր բարքեր:

Տեղին է յիշել, որ Մարկ Տուենը դեռեւս 1906թ. Սեպտեմբերի 7-ին իր ինքնակենսագրականում գրում էր, թէ 125 տարի շարունակ ամերիկացիները սովորեցնում են Եւրոպային. «Մեզ ոչ ոք չի հրաւիրել, մենք ինքներս ենք մեր կարծիքը նրան աներեսաբար պարտադրում: Մենք անգլոսաքս ենք. Իսկ երբ անգլոսաքսին ինչ որ բան հարկաւոր է, նա գնում եւ վերցնում է: Մենք՝ անգլիացիներս ու ամերիկացիներս, գող ենք, աւազակներ ու ծովահէններ, ինչով էլ հպարտանում ենք: Ամօթ է քաղաքակիրթ հասարակութեանը, որ իր շարքերում հանդուրժում է մարդկութեան այդ խայտառակութեանը»: Անցել է 100 տարուց աւելի, իսկ այդ ընթացքում անգլոսաքսերի կողմից Արեւմուտքի Հռոմէական կայսրութեան գործողութիւններին միանգամայն նման զաւթողական քաղաքականութիւնը գրեթէ նոյնն է մնացել: Յատկանշական է, որ պատմիչ Տացիտոսը մէջբերելով հռոմէացիների մասին Բրիտանիայի ցեղային առաջնորդներից Կալգակի խօսքերը, նշում էր. «Յափշտակելը, սպանելը, թալանելը, նրանց կեղծաւոր լեզուով կոչւում է կառավարել: Իսկ երբ ամէն ինչ վերածւում է անապատի, դա անուանում են խաղաղութիւն»: Մեր օրերում այդպէս եղաւ Հարաւսլաւիայում, Իրաքում, Աֆղանստանում, Սիրիայում, Լիպիայում, Ուքրանիայում: Այսօր էլ Արեւմուտքի քաղաքականութեան մէջ նոյն սկզբունքն է գործում՝ ահաբեկել եւ իրենց բարեկեցութիւնն ապահովել միւս ժողովուրդների հաշուին:

Հայաստանի անկախութեան հռչակումից ի վեր Արեւմուտքն աջակցութեան խօսքեր է շռայլում, սակայն որեւէ գործնական քայլ չի անում դրանք իրագործելու համար:

Իսկ մեր քարոզիչները, ոգեւորուելով այդ դատարկ խօսքերից, շեշտում են, թէ Հայաստանի փրկութիւնը ՆԱԹՕ-ի մէջ մտնելու, Եւրոմիութեան անդամ դառնալու մէջ է: Մինչդեռ Արեւմուտքը երբեք չի խօսում Հայաստանին ՆԱԹՕ-ի եւ Եւրոմիութեան անդամ դառնալու հնարաւորութեան մասին: Անցեալում էլ Արեւմուտքը հայերին շատ խոստումներ տուեց, բայց դրանք երբեք չիրականացան: 1918-1920 թթ.-երին եւս նրանք Սեւրի մեռելածին դաշնագրի տեսքով խոստումներ շռայլեցին, որպէսզի հայերին հեռու պահէին Ռուսաստանից, իսկ իրականում որեւէ իրական օգնութիւն այդպէս էլ չեղաւ:

Մինչ այդ էլ չորս անգամ Անգլիայի վարչապետի պաշտօնը զբաղեցրած Ուիլիամ Կլատսթոնը սուլթան Ապտուլ Համիտ II-ին «մեծ մարդասպան» էր անուանում, իսկ «Հայաստանին սատարելը՝ ծառայել քաղաքակրթութեանը»:

Սակայն 1880-1885 թթ.-ին, հայկական վիլայէթներում բարենորոգումների ծրագիրը քննարկելիս, Կլատսթոնը պաշտպանեց Թուրքիայի շահերը: 1916թ. Նոյեմբերի 7-ին Ֆրանսիայի վարչապետ Պրիանը յայտարարում էր. «Երբ արդար հատուցման ժամը հնչի, Ֆրանսիան պիտի չմոռանայ հայ ազգի կսկծալի տանջանքները եւ, համաձայն իր դաշնակիցներուն հետ, ձեռք պիտի առնէ անհրաժեշտ բոլոր միջոցները՝ անոր ապահովելու համար խաղաղութեան եւ բարգաւաճման կեանք մը» (Կարապետ Իզմիրեան. Հայ ժողովրդի քաղաքական ճակա-

Շար. - էջ 9

### CAUCASUS HERITAGE WATCH. «ԱՏՐՊԷՅՃԱՆՑԻՆԵՐԸ ՃԱՆԱՊԱՐՀ ԿԸ ԿԱՌՈՒՑԵՆ ՇՈՒՇԻԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ԸՆԴՄԷՋԷՆ»

Կովկասեան ժառանգութեան պաշտպանութեան միջազգային կազմակերպութիւնը (Caucasus Heritage Watch) ահազանգելով կը տեղեկացնէ, որ 5 Հոկտեմբերէն մինչեւ 3 Նոյեմբեր ժամանակահատուածին մէջ ատրպէյճանցիները հողաբարձ մեքենաներով ճանապարհ կը հարթեն Շուշիի պատմական գերեզմանատան ընդմէջէն, որը ծանօթ է որպէս Երեւանեան դարպասներու մօտակայքի գերեզմանոց:

Համապատասխան արբանեակային պատկերները հրապարակւած են կազմակերպութեան X-ի հասարակական ցանցին վրայ:

Ինչպէս յիշուած է գրառումին մէջ, խիտ անտառը կը ծածկէ գերեզմանոցը, ուստի անոր սահմանները տեղորոշելու համար կազմակերպութիւնը կիրառած է Շուշիի մասին հրապարակումներն ու քարտէզները: Ծառերուն միջեւ կայ առնուազն 78 տապանաքար հայերէն տապանագիրերով, որոնք թուագրուած են 1802-1913 թուականներուն: Ցարդ յայտնի չէ, թէ անոնցմէ քանի՞ն վընասուած է:

ԱԶԴԱԿ
Շաբաթաթերթ
ABAKA
Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251
*Publié par /Published by*
Le Centre de Publication Tékéyan
825 rue Manoogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5
Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca
Պատասխանատու խմբագիր՝
ԱՒԵՏԻՍ ՊԱԳԳԱԼԵԱՆ
Ծանուցումներու նուիրատուութիւններու եւ գրասենեակի պատասխանատու՝
ՍԱԼԲԻ ՄԱՐԿՈՍԵԱՆ
Թորոնթոյի պատասխանատու՝
ՄԱՍԱԹ Բ. ՄԱՄՈՒՐԵԱՆ
Canada
2nd Class $80 (QC & ON)
1ère classe/first class $150
U.S.A. 1st class (US) $150
Autres pays/Other countries:
1st class (US)$120
Per issue $1.75
Dépôt légal: Bibliothèque du Québec
PM40015549R10945
TPS/GST – R119209294 • TVQ/PST #1006268699

Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada
Canada

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԿ»Ը ՄՈՆԹՐԷԱԼԻ ՀԱՄԱՆՈՒԱԳԱՅԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ՍԱՄՈՒԷԼ ՔԷՕՇԿԷՐԵԱՆ

ՅԱՏՈՒԿ «ԱՊԱԳԱՅ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Տարիներով սպասուած ցանկութեան մը իրականացումն էր միջազգային համերգասրահներու մէջ տեսնել «Հայաստանի Ազգային Ֆիլհարմոնիկ»ը: Նոյեմբեր 19, 2023-ին Մոնթրէալի համանուագային (maison symphonique de Montréal) դահլիճին մէջ վայելեցինք մեզ անհաւատալի թուացող երազի մը իրականացումը: Դահլիճ մը, ուր քիչերուն է վիճակուած հանդէս գալ: «Հայաստանի Ազգային Ֆիլհարմոնիան» կու գայ փաստելու, որ համաշխարհային առումով իրաւասու է համահաւասար դասուիլ միջազգային «սիմֆոնիկ» նուագախումբերու:

ՀԱՖ-ը հիմնուած է 1925-ի Մարտին Երեւանի Կոնսերվատորիայի (երաժըշտանոցի) տնօրէն Արշակ Ադամեանի եւ երգահան Ալեքսանդր Սպենդիարեանի կողմէ անուանուելով՝ «Երեւանի Կոնսերվատորիայի Նուագախումբ», որուն այժմու գեղարուեստական ղեկավարն ու գլխաւոր նուագավարն (chef d'orchestre) է Հայաստանի արուեստի վաստակաւոր գործիչ ազգային ու միջազգային մրցանակներու արժանացած Էդուարդ Թոփչեանը: Թէեւ երիտասարդ սակայն իր նուաճումներով արդէն իսկ ղեկավարած է աւելի քան 50 երկիրներու միջազգային սիմֆոնիկ նուագախումբերը, որոնց կողքին ՀԱՖ-ի նուագախումբով 1989-էն սկսեալ շրջագայած է աւելի քան 15 երկիրներ՝ ԱՄՆ, Գանատա, Աւստրիա, Գերմանիա, Ֆրանսա, Զուիցերիա, Լիքսեմբուրգ, Լիբանան, Սպանիա, Փորթուգալ, Միացեալ Թագաւորութիւն, Յունաստան, Պարսկաստան, Կիպրոս, Թուրքիա, Ռուսիա, Միացեալ Արաբական Էմիրութիւններ, Ճափոն եւ Չինաստան:



Նախքան յայտագրին սկսիլը, բացման խօսքով հանդէս եկաւ Գանատայի մօտ Հայաստանի Հանրապետութեան Պատուոյ հիւպատոս՝ Մեծայարգ Տիար Լեւոն Աֆէեանը, որուն անսասան աջակցութիւնը, հնարաւոր դարձուց այս բացառիկ երեկոն: Պատուոյ հիւպատոսը հանդիսատեսին ներկայացնելէ ետք Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Վսեմաշուք Տիկին Անահիտ Յարութիւնեանը, վերջինիս հրաւիրեց կատարելու երեկոյեան հանդիսաւոր բացումը:

Յուզիչ էր տեսնել ութսուն հայ երաժիշտներու մուտքը, ապա նուագախումբի առաջին ջութակահարուհիին մուտքը, որը կը որակուորուի որպէս համերգի վարպետ-առաջնորդ (concertmaster- premier violon), որն ունի բազմաթիւ պարտականութիւններ՝ սկսած նուագախմբի լարումէն (tuning) համադրելու նուագարաններու հնչողութիւնն, ու նուագավարին հետ սերտ համագործակցութիւնը:

Պահը հասած էր երբ խումբի նուագավարը մուտք գործեց ծափողջոյններու տարափին ներքեւ ապա բարձրանալով պատուանդան ու ճիպոտի փոքր ազդով խումբը որպէս մէկ անձ մեկնաբանեցին Ա. Խաչատրեանի Սպարտակ պալլէն յաջորդաբար էգինայի տարափոխութեան Բակուս (Baccus) գինիի աստուծոյ հարբեցողութեան խնճոյքին հատուածը, Սպարտակի եւ Ֆրիկիայի Ադաջիոն, Գադիթեան երիտասարդ աղջիկներու (կոյսերու) պարերն ու Սպարտակի յաղթանակը:

Խօսելով առաջին հատուածի մասին, մեծ վարպետութիւն կը պահանջէր ներդաշնակութեամբ կատարել երգահանի փայլուն գործիքաւորումները՝ երաժշտական անընդհատ շարժում (mouvement), պատկերաւոր ցայտուն հիմնաւորուած բներգ (thème) ու երաժշտական ճկունութեամբ հաղորդել հոգեկան փոփոխականութիւն: Անվարան կրնամ ըսել «ապրին բոլո՛րը» յատկապէս նուագավարը որ շնորհիւ իր բացառիկ օժտեալ երաժիշտ ըլլալուն կրցաւ այդ բոլորը փոխանցել բոլորին: Այստեղ հարուածային ու ծնծղաներով պարին կը յաջորդէ Գադիթեան երիտասարդ աղջիկներու (կոյսերուգերիհիներու) հին հռոմէական պարերը: Գադիթեան կոյսերու ծիսական պարը փինիկեան քուրմերու սիրային պաշտամունքէն ներթափանցած է Սպանիայի հարաւը, որպէս կիրքի ծիսակատարութիւն:

Խաչատրեան զայն վերածած է երազական-վիպական (romantique) նուրբ երաժշտական երանգաւորումներով մեծալար (majeur), փոքրլար (mineur) ենթագերիշխող (sous-dominante) եւ գերիշխող (dominante) խորհրդաւոր իւրայատկութիւններով: Վերջաւորութեան Խաչատրեանը անընդհատ մարտական կուտակման վիթխարի պարի պոռթկումով ի յայտ կը բերէ Սպարտակի բներգը (motive) որպէս յաղթական բախերգ:

Անդրադառնալով Սպարտակի եւ Ֆրիկիայի Ադաջիոյի (Adagio) սիմֆոնիկ պոէմի մասին, անգերազանցելի էր է. Թոփչեանի երաժշտական բարձր



մակարդակի մեկնաբանումը. նուագավարն ու նուագախումբը միաձուլուած էին որպէս մէկ: Վերին լարերու նուրբ կցերդելու (syncope) կշռոյթով (rythme), սրինգի թրթռումներով (vibrations) զարդարանքով հետզհետէ կը զարգանայ բներգի յաջորդականութիւնը: Լարային բաժիններու անբռնազբօսիկ շարժումը կը պահպանէ մեզ ճռճռուող զգացումը, երբ տարբեր փողային նուագարաններ կը սկսին զարգացնել ստեղծագործութեան բացման բներգը, ուր թաւջութակները դանդաղ աճող սանդղակով (gamme) կը փոխադրեն յաջորդ հատուածին, ուր սրինգն ու բարձրասրինգը ցայտուն հակամեղեդիով, կը ներկայացնեն Սպարտակը եւ Ֆրիգիան: Խաչատրեանը սիրոյ բներգը, վերջին անգամ ուռճացնելէ ետք աստիճանաբար երաժշտութիւնը կ'անյայտացնէ բնութագրելով Սպարտակի ու Ֆրիգիայի անբաժանելիութիւնը:

Տուեալ երեք հատուածներու աւարտին, ըստ բեմական կարգ ու ձեւին (protocol), ղեկավարը բեմէն դուրս ուղղուեցաւ հրաւիրելու օրուայ մենակատար միջազգային ջութակահար Սերկէյ Խաչատրեանը. երբ վերջինս մուտք գործեց բեմ, դահլիճը ծափողջոյններով թնդաց ապա մենակատարն ու ղեկավարը հայեացքնին իրար ուղղելով անմիջապէս հնչեց Ա. Խաչատրեանի «րէ» փոքրալար (ré mineur) յարմարանուագը (concerto), ուր կու գայ յիշեցնել հայ ազգային ժողովրդական պարերու ռիթմիկ բազմազանութիւնը առանց օգտագործելու ժողովրդական մեղեդիները այն ինչ Խաչատրեան իր երկրորդ «մի» փոքրալար համանուագին (symphonie en mi mineur) երրորդ բաժնին մէջ օգտագործած է բոլորիս ծանօթ «Որսկան ախպեր» ժողովրդական երգի մեղեդին: Ա. Խաչատրեանի յարմարանուագը կառուցուած է հետեւեալ երեք մասերէն՝



Առաջին մասը «Allegro con fermezza»-ն (Կենսուրախ հաստատակամութեամբ) սկիզբ կ'առնէ շարժուն պարային բներգով ապա փոխակերպուելով քնարական երկրորդական մեղեդիի:

Երկրորդ մասը Andante sostenuto-ն (ընթացիկ ծանր, պերճ) յարմարանուագի ամենաքնարական ու երգային հատուածն է, որը կը ներկայացնէ կովկասեան բնապատկերը:

Երրորդ վերջնական մասը Allegro vivace (ուրախ, զուարթագին, աշխոյժ) կը կոչուի՝ շարժման ու եռանդուն (վիրտուոզ-virtuose) պտտահողմ է:

Երկար էր ծափերու գնահատանքը: հանդիսատեսի ցանկութիւնն էր, որ ջութակահարը բեմէն չիեռանար:

Ջութակահար Սերգեյ Խաչատրեանը առաջին անգամ ինը տարեկանին ելոյթ ունեցած է որպէս մենակատար սիմֆոնիկ նուագախումբի հետ Գերմանիոյ Վիսբադենի Կուրհաուս քաղաքին մէջ: 15 տարեկանին, Հելսինկի Սիբելիուսի մրցոյթին, որպէս ամենաերիտասարդ մասնակից առաջին տեղը կը գրաւէ իսկ 2005-ին Պելճիքայի Էլիզապէթ թագուհիի միջազգային մրցումին՝ որպէս առաջին մրցանակակիր իրաւունք կը ստանայ 4 տարիով հանդէս գալ 1704-ին «Հագգինս»-ի պատրաստած Ստրատիվարիուս ջութակով: 2013-ին Սերգեյ Խաչատրեանը կը պարգեւատրուի Զուիցերիական դրամատան բարձրագոյն մրցանակով, որպէս տարուայ աշխարհի լաւագոյն երիտասարդ երաժիշտը: Ան պատանի տարիքէն հանդէս եկած է մենահամերգներով նաեւ որպէս մենակատար՝ համանուագային խումբերով աւելի քան 50 երկիրներ եւ այս բոլորի կողքին տարեկան 2 համերգներով Հայաստանի մէջ:

Շար. - էջ 10

# ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ ԵՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԵՒ ԳԱՆԱՏԱՅԻ ԹԷՔԷԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ՝ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՅԱՐՁԱԿՄԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ ԱՐՑԱԽԱՀԱՅ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ ԵՐԵԽԱՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԲԱԶՄԱՆԴԱՄ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

***«Մարդիկ. որոնք կորցրել են իրենց հայրենիքը, բայց շարունակում են պահպանել վերադառնալու երազանքը»***

Ինչպէս արդէն տեղեկացրել ենք նախորդիւ, այս փուլում Միացեալ Նահանգների եւ Գանատայի Թէքէեան Մշակութային Միութիւնը որոշեց օգնել արցախահայ սոցիալապէս անապահով եւ բուժման կարիք ունեցող երեխաների ընտանիքներին:

Բազմիցս խօսւում է պատերազմների սպառնալիքների, դրանց հետեւանքների՝ աշխարհում տիրող ահագնացող տագնապալի երեւոյթների մասին, սակայն ժամանակն է, որ աշխարհը կարեւորի եւ լուծումներ գտնի խաղաղ երկխօսելու:

Բռնագրաւեալ Արցախի Հանրապետութիւնից բռնի տեղահանուած Նորան պատմեց, որ տղան՝ Էդուինը 44-օրեայ պատերազմի սկսուելու օրը 3 օրեկան էր: Ապաստարանում էին եւ երեխան



արկի պայթիւնի ձայնից ստացել է ականջների խեցիների բորբոքում՝ գլխում ջուր է հաւաքւում, այտուցւում է: Էդուինը 1.5 տարեկան հասակում վիրահատուել է Ստեփանակերտում, իսկ շրջափակման ամիսներին ընդհատուել է դեղերի ընդունումը: Այժմ տղան 3 տարեկան է եւ բուժումը շարունակելու է Երեւանում:

Լիւբայի ամուսինը՝Արմօն, զոհուել է Սեպտեմբերեան դէպքերի օրերին դիրքերում: Ընտանիքում մեծանում է 4 տղայ՝ 7- 26 տարեկան. 7 տարեկան Արտեօմի մօտ ախտորոշուել է սարկոմա, բուժւում է Երեւանի Եոլեանի անուան արիւնաբանական հիւանդանոցում: Արցախում ապրել են Մարտունու շրջանի Գիշի գիւղում: Այժմ ապրում են Արարատի մարզի Այնթափ գիւղում. «Արցախում թողել ենք ԱՄՆ ինչ՝ հարազատների շիրիմներից մինչեւ եր-



ջանիկ անհոգ ժամանակներ: Արցախում թողեցի այն, ինչը չեմ գտնի ոչ մի տեղ. հայրենիքս եմ թողել, բայց Արցախ վերադառնալու երազանքը մեր մէջ մնացել»:



Վիկտորիան ամուսնու՝ Սեւակի հետ մինչեւ Սեպտեմբերի 19-ը ապրում էր Արցախի Մարտունի քաղաքում: Նրանց ընտանիքում մեծանում էին 4 անչափահաս երեխայ՝ 6-15 տարեկան: Սեպտեմբերի 19-ին Սեւակը զոհուել է քաղաքի դիրքերը պաշտպանելիս: Այժմ երեխաների հետ ապրում են Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքում: Տղաները դժուարութեամբ են յաղթահարում Արցախի տան, բակի, ընկերների կարօտը, ունեն նոր տեղանքում յարմարուելու հոգեբանական խնդիրներ. «Իրենց որբացած են զգում առանց Արցախի: Արցախն էլ որբ մնաց առանց ժողովրդի»,-նշում է Վիկտորիան:

Կարինէի 7 հոգանոց ընտանիքը, որից 5-ը անչափահաս երեխաներ են, Արցախում ապրել են Ստեփանակերտում: Այժմ բնակութիւն են հաստատել Լոռու մարզում: «Առաւօտեան անսպասելի կրակոցներ լսուեցին, մտածեցինք վարժանքներ են, յետոյ կրակոցների ձայնը աւելի պարզ ու մօտ



էր լսւում, մարդիկ փողոցում վազվզում էին: Որոշեցինք դուրս գալ՝ թողնելով տուն, մեքենայ, ամէն ինչ. միայն հասցրել ենք երեխաներին հանել»- վերապրելով պատմում է Կարինէն: Որդին՝ 14 տարեկան Արմէնը, երիկամի քաղցկեղ ունի: Բլոկադայի ժամանակ չի կարողացել անհրաժեշտ դեղորայք ընդունել, այժմ մանկական կլինիկայում հաշուառուած է եւ բուժման կուրս է ընդունում:

Յարութիւնեան Ռուզաննայի 11 հոգանոց բազմանդամ ընտանիքին փախչելու համար վառելիքի կարիք կար. ընդամէնը 7 լիթր պենզին էր անհրաժեշտ ընտանիքը Գորիս հասցնելու համար: Ամուսինը՝ Դաւիթը, հերթագրուել էր պահեստից վառելիք ստանալու համար: Պայթիւնի ժամանակ Դաւիթը կանգնած է եղել մօտակայքում եւ ստացել է տարբեր աստիճանի այրուածքներ: Նա մինչ օրս յետվիրահատական թերապիա է անցընում այրուածքաբանութեան հիւանդանոցում, իսկ 5 տարեկան աղջիկը՝ Ադրիանան, ունի արեան խրոնիկ հիւանդութիւն եւ բուժւում է ստանում հիւանդանոցում:

Սեւումեան Բաղդասարի եւ Իրինայի վեցհոգանոց ընտանիքում 3-16 տարեկան 4 անչափահաս երեխայ կայ: Նրանք անհոգ ապրել են Մարտունու շրջանի Շեխէր գիւղում: Կրտսեր տղայի՝ Բաղդասարի մօտ 3 տարեկանում յայտնաբերուել է կիստա, վիրահատուել է մէկ անգամ, սակայն բժիշկների խորհրդով կրկին վիրահատուելու ցուցում կայ: Այժմ ապրում են Վայոց Ձորի մարզում՝ Եղէգնաձորում:

Բաղդասարեան Արթուրի եւ Ժաննայի 10 հոգանոց ընտանիքը ապրել է Մարտակերտի շրջանի Ճան գիւղում՝ 16 տարեկան Մարիամ, 14 տարեկան Դաւիթի, 12 տարեկան Ալեքսէյի, 10 տարեկան Ռայայի, 7 տարեկան Մարինայի, 6 տարեկան Հենրիի, 3 տարեկան Ռուդիկի եւ 2 տարեկան Մոն-



թէի: Այժմ ընտանիքը ապրում է Վայոց Ձորի մարզի Մալիշկա գիւղում. «Եթէ Արցախում չենք, միեւնոյն է, թէ որտեղ կը լինենք. Արցախը դրախտավայր էր»:

Արցախցի իւրաքանչիւր ընտանիք բազմանդամ է. Արցախում մշտապէս խրախուսուել է շատ երեխաներ ունենալը: Դա Արցախի կառավարութեան կողմից յատուկ նպատակ էր՝ պահպանելու ղարաբաղի գենը, լեզուն ու բարբառը: Արցախցու համար բարբառով շփուելը եղել է, կայ ու կը լինի կարեւոր ու պարտադիր:

Արցախի ժողովրդի եւ յատկապէս երեխաների յիշողութիւններում յաւերժ կը մնան արցախահայերի նկատմամբ Ատրպէյճանի կողմից թոյլ տուած վայրագութիւնները, որ մէկ բառով ցեղասպանութիւն է կոչւում:

Միաւորելով ջանքերը՝ արցախահայերի օգնութեան ծրագրերը շարունակւում են:

Ծրագրին միանալու համար կարող էք ԱՄՆ–ում նուիրատուութիւնները ուղարկել հետեւեալ հասցէով. Tekeyan CulturalASssociation Artsakh Aid, 755 Mount Auburn Street, Watwrown MA 02472, https://givebutter.com/ AGuStb,
իսկ Գանատայում՝ Tekeyan CulturalASssociation Artsakh Aid, 825 Manougian Str., Ville Saint-Laurent, Quebec H4N 1Z5, Canada հասցէով, https:// www.convergepay. Com/hoted- payments/?ssl-tsn-auth-token=khtGf%2FjkTgWma7CEev3bQaaayrSp5tT'!/payment-method

ԳԱՅԵԱՆԷ ՄՈՒՐԱՏԵԱՆ
Երեւան , 21 Նոյեմբեր 2023թ.

ABAKA
SECTION FRANÇAISE
LUNDI, 4 DECEMBRE 2023

# Comment l'Azerbaïdjan a trompé l'Occident lors des négociations avec l'Arménie

***Écrit en anglais par Benyamin Poghosian et publié dans The Armenian Mirror-Spectator en date du 23 novembre 2023***



L'impasse apparente dans les négociations entre l'Arménie et l'Azerbaïdjan après la prise de pouvoir militaire en a surpris beaucoup, notamment en Occident. Beaucoup considéraient l'existence de la République autoproclamée du Haut-Karabagh et des Arméniens qui y vivaient comme le seul obstacle majeur sur la voie de la paix entre l'Arménie et l'Azerbaïdjan.

Selon cette logique, alors que tous les Arméniens ont été contraints de quitter le Haut-Karabagh et que le président de ce dernier, Samvel Shahramanian, a été contraint de signer un décret sur la dissolution de la république d'ici la fin 2023, le décor était planté pour un accord de paix entre l'Arménie et l'Azerbaïdjan. Ensuite, dit-on, l'Arménie normalisera ses relations avec la Turquie et, enfin, elle pourra prendre des mesures concrètes pour réduire sa dépendance à l'égard de la Russie. Puis une nouvelle ère de paix émergera dans la région, avec moins de Russie et d'Iran et plus d'Occident, tandis que les Arméniens, les Azerbaïdjanais, les Turcs et les Géorgiens vivront, commerceront et interagiront heureux les uns avec les autres.

Il est difficile de prétendre que c'est là le motif principal de l'implication intensive de l'Union européenne (UE) dans les négociations entre l'Arménie et l'Azerbaïdjan, car ce récit nécessite une réflexion stratégique, ce qui manque encore à Bruxelles. Cependant, beaucoup à Washington regardaient dans cette direction avec un certain espoir. Ainsi, lorsque le 26 septembre, le secrétaire du Conseil de sécurité arménien Armen Grigorian a rencontré le conseiller en politique étrangère du président azerbaïdjanais Ilham Aliev, Hikmet Hajiyev, à Bruxelles, beaucoup en Occident s'attendaient à ce que le plus grand triomphe de l'UE dans le monde post-soviétique se produise. Bientôt l'Arménie et l'Azerbaïdjan signeront un accord de paix à Bruxelles ou dans une autre capitale occidentale d'ici la fin 2023, marquant le début d'une nouvelle ère pour l'UE et la région.

Cependant, au lieu de créer un triomphe, les deux mois suivants se sont soldés par la confusion, l'irritation et la colère dans les capitales occidentales. L'Azerbaïdjan a soudainement réduit sa participation aux plates-formes de négociations occidentales, annulant les réunions à Grenade, à Bruxelles, puis à Washington. Bakou a commencé à parler du rôle destructeur des puissances occidentales dans la région, les a accusées d'être pro-arméniennes et a appelé à une solution des problèmes de la région par les puissances régionales, ce qui ressemble précisément à la Russie et à l'Iran.

Au lieu d'avoir une région avec moins de Russie et d'Iran et plus d'Occident, la prise de contrôle militaire du Haut-Karabagh par l'Azerbaïdjan a donné lieu à un Caucase du Sud plus instable, où l'Azerbaïdjan fait désormais pression sur l'Arménie et prend des mesures pour renouveler ses relations avec la Russie et l'Iran, et où la plateforme 3+2 apparaît de plus en plus influente. Parallèlement, l'UE et les États-Unis sont confus et n'ont aucune idée claire de la marche à suivre. L'UE affirme désormais qu'au lieu de faire pression sur l'Azerbaïdjan, elle augmentera son soutien à l'Arménie, mais apparemment, ce n'est pas ce qu'elle espérait il y a à peine deux mois.

Alors, que s'est-il passé au cours des deux derniers mois ? Pour répondre à cette question, nous devons analyser les négociations entre l'Arménie et l'Azerbaïdjan au cours des deux dernières années sous l'égide de l'Occident. Après la première rencontre entre le président Aliev et le Premier ministre arménien Nikol Pachinian à Bruxelles en décembre 2021, l'idée est apparue que l'Arménie devrait abaisser la barre quant au statut du Haut-Karabagh et reconnaître l'intégrité territoriale de l'Azerbaïdjan à l'intérieur des frontières de l'Azerbaïdjan soviétique. Tout le monde a compris que si l'Arménie reconnaissait le Haut-Karabagh comme faisant partie de l'Azerbaïdjan, alors l'Arménie devrait finalement accepter la dissolution de la République du Haut-Karabagh et de toutes ses institutions, y compris l'armée de défense du Haut-Karabagh. Il est impossible d'avoir un État séparé en Azerbaïdjan et une autre armée en plus de l'armée azerbaïdjanaise.

Du point de vue occidental, la reconnaissance de l'intégrité territoriale de l'Azerbaïdjan avec le Haut-Karabagh éliminerait le principal obstacle pour la paix entre l'Arménie et l'Azerbaïdjan : l'avenir de l'Artsakh et des Arméniens qui y vivent. Simultanément, l'Occident espérait convaincre ou forcer le président Aliev à accepter d'accorder des droits spéciaux aux Arméniens vivant au Karabagh. Le compromis était apparemment le suivant : l'Arménie abandonne toute discussion sur le statut, y compris la

Suite à la page 6

# Loi sur la protection des Arméniens adoptée par le Sénat des États-Unis




L'Assemblée arménienne a salué l'adoption d'une législation bipartite dirigée par les sénateurs Gary Peters, démocrate du Michigan, et Marco Rubio, républicain de Floride. La loi arménienne sur la protection de 2023 abroge le pouvoir de dérogation à l'article 907 de la loi de soutien à la Liberté (Freedom Act) pour les exercices 2024 et 2025. L'article 907 stipule que les fonds américains « ne peuvent être fournis au gouvernement de l'Azerbaïdjan jusqu'à ce que le président détermine et rapporte au Congrès que le gouvernement de l'Azerbaïdjan prend des mesures démontrables pour mettre fin à tous les blocus et autres recours à la force contre l'Arménie et le Haut-Karabagh ».

« Nous félicitons les sénateurs Peters et Rubio pour cette législation bipartite », a déclaré Mariam Khaloyan, directrice des relations avec le Congrès. « L'adoption de ce projet de loi envoie un message fort face à la politique génocidaire de l'Azerbaïdjan contre le peuple arménien », a poursuivi Khaloyan.

Gary Peters, qui s'est rendu en Arménie en septembre a déclaré à son retour, lors d'un événement de l'Assemblée en l'honneur de l'ancien secrétaire à la Marine Paul Ignatius, qu'il « allait encourager davantage de collègues du Sénat » à soutenir le peuple arménien et à « avoir des répercussions » contre le régime azerbaïdjanais d'Aliev. Le sénateur Peters a appelé l'administration à « imposer des sanctions » à l'Azerbaïdjan et à appliquer l'article 907 de la loi de soutien à la Liberté. « Je fais tout ce que je peux pour m'assurer que le peuple arménien puisse voir ses droits humains protégés et vivre dans la dignité », a déclaré le sénateur Peters. « Nous devons envoyer un signal fort à l'Azerbaïdjan : ce qu'il a fait est tout simplement inacceptable. » Le mois dernier, l'église arménienne St John et la section du Michigan de l'Assemblée arménienne ont organisé un déjeuner-réunion et une séance d'information avec le sénateur Peters et des membres de la communauté arménienne, au cours desquels Peters a clairement indiqué qu'il reconnaissait à quel point la situation sur le terrain était critique et a souligné que « les États-Unis doivent contribuer à garantir que les Arméniens de la région reçoivent une aide humanitaire et doivent cesser toute assistance militaire à l'Azerbaïdjan ».

Suite à la page 6

# Ajout à la pétition de l'Arménie soumise à la Cour européenne des droits de l'homme contre l'Azerbaïdjan



La requête interétatique déposée par l'Arménie contre l'Azerbaïdjan devant la Cour européenne des droits de l'homme sera complétée par la question du rétablissement des droits de propriété des résidents de l'Artsakh (Haut-Karabagh). C'est ce qu'a informé Hasmik Samvelian, attachée de presse du bureau du représentant de l'Arménie pour les questions juridiques internationales.

Madame Samvelian a indiqué que cette action en justice serait intentée dans un avenir proche, sans pouvoir donner de date exacte.

# Des témoignages des rescapés d'Artsakh recueillis par le Musée du Génocide d'Arménie



Le financement du Département de documentation et de collecte de données des victimes du génocide arménien a été approuvé dans le cadre de la modernisation de la base matérielle et technique des divisions scientifiques du Comité de l'enseignement supérieur et des sciences du ministère de l'Éducation, des Sciences, de la Culture et des Sports d'Arménie.

Le Musée-Institut du Génocide arménien a informé que le projet à mettre en œuvre, visant à rééquiper le musée-institut en moyens techniques modernes, permettra de revigorer la sous-discipline de l'histoire orale et de collecter

Suite à la page 6

# Libération de l'assassin de Hrant Dink



Hrant Dink, journaliste, rédacteur en chef de l'hebdomadaire turco-arménien bilingue Agos et écrivain turc d'origine arménienne, a été abattu en pleine rue le 19 janvier 2007. Son meurtrier Ögün Samast, alors âgé de 17 ans seulement, a bénéficié d'une libération pour « bonne conduite » le 15 novembre 2023, tandis que les commanditaires de son acte n'ont toujours pas été identifiés, déplore la presse d'opposition.

Militant d'extrême droite, son jeune assassin, condamné à près de 23 ans de prison en 2011, a fini par être libéré le 15 novembre 2023, seize ans après les faits.

L'identité de ceux qui ont armé le bras de l'assassin reste encore débattue, regrette la presse d'opposition. Les ultranationalistes laïcs ont été, dans un premier temps, pointés du doigt, avant que le pouvoir actuel n'accuse la confrérie de l'imam Fethullah Gülen [ancien allié du président Erdogan, devenu son ennemi juré] d'avoir été à la manœuvre. Seule certitude, le meurtrier a bénéficié du soutien ou de la complicité de membres des forces de sécurité et a commis son acte dans un contexte de déchaînement public de haine envers la minorité arménienne, qui compte au moins 40 000 personnes, surtout à Istanbul.

Nouvellement élu à la tête du CHP (Parti républicain du peuple), le principal parti de l'opposition républicaine et laïque, Özgür Özel s'est recueilli, le 18 novembre, sur les lieux du meurtre, en signe de protestation. Il y a déposé une gerbe de fleurs, accompagné des slogans habituels « Nous sommes tous Hrant, nous sommes tous arméniens ».

Devant le tollé suscité par la libération anticipée du meurtrier, les autorités ont fait savoir qu'une nouvelle instruction judiciaire pour « crime au nom d'une organisation terroriste » avait été ouverte, rapporte le quotidien Cumhuriyet. Il devrait être convoqué devant un juge le 26 décembre, rapporte le journal.

En 2021, quatre personnes ont été condamnées à la prison à vie dans le cadre d'un autre procès pour l'assassinat de Hrant Dink. Ces chefs de la police et ex-responsables de la gendarmerie étaient informés du projet d'assassinat mais n'avaient pris aucune mesure pour l'empêcher.

# Des...

Suite de la page 5

et rechercher en permanence les histoires orales des 2e, 3e et 4e générations de victimes et survivants du génocide arménien afin de reconstituer la base de données. L'organisation la plus systématique et la plus appropriée du travail factuel et sur le terrain nécessite un enregistrement vidéo, un traitement et un stockage de haute qualité de toutes ces données précieuses.

Le projet permettra également de recueillir et rechercher les témoignages d'Arméniens déplacés de force d'Artsakh, qui peuvent contribuer non seulement aux études scientifiques, mais aussi aux processus juridiques.

Grâce à la mise en œuvre du projet, le Musée-Institut du Génocide aura l'occasion d'augmenter le niveau de visibilité de la recherche scientifique, de promouvoir la coopération avec les organisations scientifiques et éducatives arméniennes et étrangères et les chercheurs individuels. Le projet contribuera également à la mise en œuvre des programmes éducatifs et culturels de l'institut.

# Loi ...

Suite de la page 5

Membre de la commission sénatoriale des relations étrangères et principal protecteur d'une résolution condamnant le blocus imposé par l'Azerbaïdjan aux Arméniens du Haut-Karabagh et les violations continues des droits de l'homme, le sénateur Marco Rubio est un fervent partisan des questions arméniennes. Les sénateurs Rubio et Peters se sont également joints à une lettre bipartite bicamérale adressée au secrétaire d'État Antony Blinken et à la secrétaire au Trésor Janet Yellen appelant l'administration à imposer des sanctions internationales de grande magnitude contre l'Azerbaïdjan.

L'Assemblée a demandé à plusieurs reprises des sanctions pour tenir l'Azerbaïdjan responsable de sa politique génocidaire et dans le témoignage de l'Assemblée devant la sous-commission des affaires étrangères de la Chambre des représentants sur l'Europe, elle a déclaré que « l'Azerbaïdjan ne devrait pas être récompensé pour son assaut continu contre le peuple arménien, mais plutôt sanctionné, » et a souligné que « les États-Unis disposent de nombreux outils pour y parvenir ».

L'adoption de ce projet de loi au Sénat par vote est significative et davantage d'actions sont nécessaires étant donné l'agression continue de l'Azerbaïdjan et de la Turquie contre le peuple arménien. La prochaine étape du processus législatif consiste pour la Chambre à adopter la mesure.

# Comment...

Suite de la page 5

